

АНАЛИТИКОН

Ежемесячный аналитический журнал
Для мыслящих и равнодушных людей

СТЕПАНАКЕРТ
Сентябрь
2017

Тема номера - МИГРАЦИЯ

THE ANALYTICON

Analytical Monthly Journal
For those who think and care

СТЕПАНАКЕРТ
September, 2017

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՄՏԱԾՈՂ ԵՎ ՈՉ ԱՆՏԱՐԲԵՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

#09 (105) սեպտեմբեր, 2017

Գլխավոր խմբագիր՝ Գ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ
Թողարկու խմբագիր՝ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հիմնադիր եւ հրատարակիչ՝
«Ստեփանակերտի մամուլի ակումբ» ՀԿ

Հասցե՝ 375000
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ
փ. Մարտունի 73

Հեռախոս՝ +37447 942693
943810

e-mail: bgegam@gmail.com

Համարի լուսանկարները՝ համացանցային բաց աղբյուրներից

«ԴԻՋԻԿ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ
Ստեփանակերտ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 4 Նոնա ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ. «Միջազգային միգրացիաների հայեցակարգումը մակրոպատմական հեռանկարում»
- 9 Ստեփան ԴԱՆԻԵԼՅԱՆ. «Հայաստանից ովքե՞ր և ինչպե՞ս են մասնակցում գլոբալացմանը»
- 14 Արթուր ԵՂԻԱԶԱՐՅԱՆ. «Հայաստանն ու արտագաղթը՝ պատմության հազարամյա քառուղիներից առայսօր»
- 19 Արման ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. «ՀՀ դիվանագիտության որոշ խնդիրներ՝ արդի գլոբալ միգրացիայի պայմաններում »
- 24 Գագիկ ԱՂԲԱԼՅԱՆ. «Միգրացիա» անունով տեղաշարժի եւ «արտագաղթ» անունով ցավի մասին»
- Արտատպություն -----
- 28 Ազատություն. «2012-2016 թվականներին Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչությունը կրճատվել է մոտ 200 հազարով»
- 30 Chai Khana. «Կես Կյանք»
- 39 BBC. «Եվրոպայի ներգաղթյալների ճգնաժամը. ԵՄ-ի դատարանը մերժեց քվոտայի հայցը»
- 41 Le Monde. «Միգրանտներ. արվեստագետների մի խումբ կոչ է անում ստեղծել «մշակութային անձնագիր»
- 43 Welt. «Թրամփը և «պայթյունավտանգ նռնակը»



**Միջազգային միգրացիաների հայեցակարգումը
մակրոպատմական հեռանկարում**

Վերջին տասնամյակների քրեստոնմատիկ ակադեմիական տեքստերի քննությունը պարզել է, որ միգրացիաների մասին կարելի է խոսել էթնիկական (Այվան Լայթ, Մեթյու Լայթ) և ոչ էթնիկական (Ջովաննի Արիգի, Ռիչարդ Լահման) հասկացությունների, արտատարածքային (Ֆեռնան Բրոդել) և տարածքային/աշխարհաքաղաքական (Ռենդալ Քոլինզ) եզրույթների շրջանակում: Սոցիոլոգների ամերիկյան կոհորտային միավորում է մի քանի բան. նրանք բոլորը մասնավորաբար քննում են կապիտալիզմի բնույթի հարցը, հետազոտում տարբեր հասարակություններում վերնախավերի հակամարտությունն ու միգրացիան՝ որպես այդ հակամարտության արդյունք և վերջինիս նկատմամբ արձագանք: Նրանք զբաղվել կամ զբաղվում են պատմական սոցիոլոգիայով, ըստ էության համաշխարհային պատմությամբ՝ սոցիոլոգիական տեսանկյունից:

Ի՞նչն է որոշում տարբեր երկրների քաղաքականությունը միգրանտների նկատմամբ: Ինչո՞ւ միգրանտների մի մասը հեշտորեն և պատրաստակամորեն է ձուլվում, իսկ մյուս մասը վերարտադրում իր կյանքի դարավոր ընտանի կենսակերպը: Ռենդալ Քոլինզը կարծում է, որ էվոլյուցիոն մոդելի մեջ առանձնանում են հաղորդակցման, ժամանակավոր դիմակայության, հարմարվելու և ձուլման փուլերը: Փոփոխությունների պատճառը *շուկայական տնտեսության* զարգացումն էր, *աշխատանքի բաժանումը* և *ուրբանիզացիան*, որոնք քայքայում էին տարածաշրջանային սահմանները և սկիզբ դնում շատ ավելի մեծ խմբերի մեջ մարդկանց ձուլվելու գործընթացին: Կան շատ վկայություններ, որ հիշյալ գործընթացն առավել հաճախ հենց այսպես էր զարգանում (ժամանակակից աշխարհում այդ գործընթացների մասին տե՛ս Waldinger, 1996, իսկ 20-րդ դարավերջում՝ Lieberman, 1980):

Սակայն ագրարային նվաճման փորձը վկայում է, որ շուկայական կառույցները կարող են զարգանալ նաև ավելի նեղ էթնիկական սահմանների պահպանման պարագա-

յում կամ, առնվազն, դեպի մեծ խմբեր ձուլվելու շատ դանդաղ ընթացքի դեպքում: Հնդկաստանի պարսերը, միջնադարյան Եվրոպայի «արքայական հրեաները», Հանսեի գերմանացիները Բալթյան երկրներում՝ ահա առևտրային և վարչական կենտրոններում գոյություն ունեցած էթնիկական մեկուսատարածքների ընդամենը մի քանի օրինակ:

Ինչպիսի՞ հետազոտեր ունեն միգրացիոն ու համաշխարհայնացման գործընթացների և արդիականացման նախագծերի խաչաձևումները: Վերջիններիս մասին խոսելիս նկատի ունենք սոցիալական դիրքի *բարելավումը* և կենսակերպի ավելի բարձր չափանիշների իրացումը: Միգրանտները նպաստո՞ւմ են համաշխարհային աղքատության դեմ պայքարին, թե՞ դրան ծնունդ են տալիս: Ինչո՞վ են զանազանվում էթնիկական տնտեսություններն էթնիկական մեկուսատարածքներից և ինչո՞վ են տնտեսությունների նախորդ երկու տեսակները տարբերվում, այսպես կոչված, միջնորդական վերնախավերից: 1980-ական թվականներից ի վեր այս հարցերին պատասխան էր որոնում Այվան Լայթի ղեկավարած ամերիկյան սոցիոլոգների խումբը: Էթնիկական խմբերը կարող են ստեղծել *արհեստավարժ մեկուսատարածքներ* աշխատանքի խիստ բաժանման դեպքում: Այս միտման ծայրահեղ դրսևորումներից է, օրինակ, հնդկական դասակարգային/կաստային համակարգը:

«Էթնիկական տնտեսություն» և «Մերժելով միգրացիան» գրքերի հեղինակ Այվան Լայթը գիտական շրջանառության մեջ է մտցրել *էթնիկական տնտեսություններ* և *միջնորդական փոքրամասնություններ* (կամ պարիաների տնտեսություն՝ ըստ Մաքս Վեբերի) նրբերանգային եզրույթները: Նա խորհրդածում է Լոս Անջելես կոմսությունում էթնիկական կլաստերների անդրսահմանային միգրացիաների մասին, որոշ դեպքերում փորձելով պատասխանել այն հարցին, թե ինչու որոշ դեպքերում արդիական է միգրացիաների էթնիկացումը (ethnization):

Իր ավելի ուշ աշխատության մեջ ի թիվս այլոց նա խոսում է մի շարք հայեցակարգո-

րեն կարևոր երևույթների՝ անձնագրավորման և սահմանի մասին: Լայթի կարծիքով դարերի սահմանագծին սոցիալիզմն ու ներառող ազգայնականությունը (ի հեճուկս *բացառող ազգայնականություն*) հիմնականում կորցրել է միավորելու և մեծ ու տարածագույն խմբերը միասնական գործողությունների մղելու կարողությունը: Էթնիկականությունը, մասնակիորեն լրացնելով թափուր տեղը, դարձել է ավելի ռելիեֆային և ընդունելի հիմք՝ անձնական ինքնագիտակցության և միասնական/կոլեկտիվ գործողության համար: Որպես հետևանք՝ սոցիալական համագործակցությունն ու հակամարտությունն այժմ ավելի հաճախ են դրսևորվում էթնիկական շրջանակներում, քան մեզանից մեկ սերունդ առաջ:

Չգտելով կառուցել ժամանակակից աշխարհում իր տնտեսական ճակատագրի սեփական հետագծերը՝ տնտեսապես ոչ առանձնաշնորհյալ խմբերը (ներառյալ կանանց, էթնիկական փոքրամասնությունները և ներգաղթյալ շատ ազգությունները) սկսում են տեղաբնիկների համեմատ ավելի առաջանցիկ զարգացնել իրենց ձեռնարկատիրական գործունեությունը (native-bornwhitemales - Light, Gold 2000): Արդյունքում, աճում է էթնիկական խմբերի միջև լարվածությունը և էթնիկական զբաղվածության խորշերը *բալկանացում* և տրոհում են աշխատանքային շուկան՝ ինսայդերներին նոր արտոնություններ շնորհելով: Ընդ որում՝ էթնիկական բիզնեսներն ընկալվում են որպես գաղութացնող և սոցիալական աութսայդերներին շահագործող երևույթներ:

Վերջին հաշվով, այս էթնիկական տնտեսությունները հավակնում են ոչ միայն պետական պատժամիջոցներից խուսափելուն, այլև տիրանում են պետության երաշխավորած ֆորաների (վելֆերյան բարեփոխումների, աֆիրմատիվ ակցիաների, բազմամշակութայնության քաղաքականության և երկլեզվյան կրթության շնորհիվ): Պատկերն այնքան վարդագույն է դառնում, որ նվազագույնի է բերում ամենահամարձակ ազատական նախագծերի ուտոպիականությունը: Միգրանտների տնտեսական ռազմավարությունների հետազոտու-

թյան համապատկերում Լայթն ու համահեղինակները վերլուծում են նաև հին հայեցակարգերը, օրինակ՝ *միջնորդական առևտրային փոքրամասնություններ* (middlemanminorities - Light; Bonacich) և շրջանառության մեջ են դնում ավելի լայն հասկացություններ (этнические экономики), բացատրելով, օրինակ, էթնիկական տնտեսությունների, էթնիկական մեկուսատարածքային/անկլավային տնտեսությունների և էթնիկապես վերահսկվող տնտեսության միջև առկա տարբերությունները:

Տիպաբանություններից և մոտեցումներում առկա տարբերություններից բացի միգրացիաների ուսումնասիրությունը պահանջում է նոր համաշխարհային իրողություններն ըմբռնելու և դրանց հարափոփոխ ուրվագծերն ու վերադասավորումները մեկնաբանելու հմտություն: Դրան հաջորդում է նոր՝ ոչ դյուրին հարցերի փաթեթը. արդյո՞ք միգրանտները նպաստում են հասարակությունների արդիականացմանը և այլևայլ սոցիալական սահմանազատումների մեղմացմանը, թե՞ դրանք մորեխի պես քայքայում են լավ կազմակերպված և ճյուղավորված ուրբանիստական ենթակառուցվածքները և չարաշահում են այն բարիքները, որոնցում պատմականորեն ոչ մի ներդրում չեն արել:

Խորհրդածելով, թե ինչ վիճակում էին միգրացիոն «գործերը» ԽՍՀՄ կոչված ուտոպիստական սոցիալական նախագծում ամերիկացի սոցիոլոգ Գեորգի Դեռլուզյանն օգտագործում է ինքնափլուզում եզրույթը («Փլուզելով սեփական համակարգի հիմնարար կառուցվածքները»): «Արդյո՞ք կապիտալիզմն ունի *ապագա*» աշխատության մեջ (Վալերսթայն, Քոլինզ, Ման, Կալիուն, Դեռլուզյան, 2015) Գ. Դեռլուզյանը փորձում է բացահայտել ԽՍՀՄ անսպասելի ու կայծակնային ինքնառչնչացման պատճառները: Ինչպե՞ս էր հաղթահարվում 1989թ. շենը ԽՍՀՄ-ում (վերնախավերի խուճապային անվճռականությունը) և Չինաստանում (կապիտալիստական աճի նորագույն հրաշքը պահպանողական վերափոխման հաշվին՝ կոլեկտիվ գործողությունների դիմե-

լու վերնախավերի կարողության պահպանման համատեքստում՝ *որպեսզի ամեն ինչ մնա նույնը, պետք է ամեն ինչ փոխել* սկզբունքով):

Սոցիալիստական բլոկի անկումը Դեռուզյանը բնութագրում է որպես հարված ներսից, ինչն այն զարմանալիորեն տարանջատում է լայն տարածում գտած դավադրամուլական սխեմաներից: Այս հետազոտերը որոշ կարևոր բաներ են հուշում, այդ թվում և համաշխարհային միգրացիաների և կապիտալիզմի ապագայի մասին: Սոցիալիզմը ոչ միայն չէր նպաստում միգրացիաներին, այլև խստորեն ճնշում և վերահսկում էր դրանք: Հիշենք գրանցման հրեշավոր համակարգը, կոլեկտիվացման և այլ «արդիականացնող» սոցնախագծերի համար մարդկանց ամրագրումը հողին, գյուղացիներին անձնագրեր չտրամադրելը, նրանց օտարահպատակ և անհուսալի հռչակելը, արյունալի բռնաճնշումների ենթարկելը և այլն: Սոցիալիզմի անկման պատճառը մասնավոր մակարդակի վրա տնտեսական ճգնաժամը, լճացումը, համակարգային կոլապսը հաղթահարվում էին գերազանցապես արտաքին պաշարի՝ սեզոնային արտազնա աշխատանքի, այսինքն՝ միգրացիաների օգնությամբ:

Հետաքրքիր է դիտարկել ազգայնականության, ազգային պետությունների և միգրացիաների փոխհարաբերությունները սոցիալական միջավայրերի այն իրողությունների միջոցով, որոնք *ազգային պետությունը ժամանակավրեպ երևույթ* են դիտում: Ի հեճուկս ազգայնականության հիման վրա կառուցված պետությունների մոտալուտ անհետացման մասին համաշխարհայնացման ջատագովների կանխատեսումների՝ սոցիոլոգները հարցադրում են անում, թե արդյո՞ք համաշխարհայնացումը և միջազգային միգրացիաները խթանում են ազգայնականության հաղթահարումը: Պատմության սոցիոլոգ Ռիչարդ Լահմանն, օրինակ, հակադրում է բազմաձևակությանություն + քաղաքական կոռեկտություն ենթադրող *անդրէթնիկական կոսմոպոլիտ(ան)իզմը պետությունների ազգայնականացմանը:*

Արդյո՞ք համաշխարհայնացումը խարխլել է ազգայնացող պետության հզորությունը (ազգայնականությունը ստեղծում են պետությունները, ոչ ընդհակառակը՝ պնդում էր Էրիկ Յոսբաումը): Ինչո՞ւ է Արևմուտքը դարձել կապիտալիստական: Ինչո՞ւ է կապիտալիզմը կենսունակ: Ինչպիսի՞ն են միգրացիաների փոխհարաբերությունները 500-ամյա կապիտալիստական համակարգի հետ: Ահա այսպես է շարունակում Ռիչարդ Լահմանն իր գլուխկոտրուկ հարցերի քննությունը: Ինչպե՞ս է կապիտալիզմի զարգացումն ազդել միգրացիոն թրենդների վրա: Ինչպե՞ս է դասավորվելու կապիտալիզմի ապագան հեզեմոն չունեցող աշխարհում: Ի՞նչ է սպառնում կապիտալիզմին և ինչպիսի՞ն փոփոխություններ են կրելու համաշխարհային միգրացիոն գործընթացները, երբ աշխատատեղերի քանակը հասնի նվազագույնի:

Ռ. Լահմանի կարծիքով՝ միգրանտների մասնակցությամբ անկարգություններն իմաստազրկվում են, քանի որ համապարփակ ռոբոտացման պատճառով սպասվում է աշխատանքային հարաբերությունների վերացման ժամանակաշրջանի վերահաս հաստատում (Լահմանը հռեետետորեն կանխատեսում է մաս ԱյԹի արդյունաբերության մահը:) Այն հանգեցնելու է ապրելու համար անհրաժեշտ միջոցների կենտրոնացված բաշխման գործառույթներով սոցիալիզմի: Ի մի բերելով բազմամյա բանավեճի արդյունքները՝ նա հետաքրքիր եզրակացության է հանգում, թե կապիտալիզմի մեջ ներդրված է *սոցիալիզմի կոկոնը*: Միջին դասակարգի աղքատացումը (որի հաղթահարման վրա է ԱՄՆ ներկայիս նախագահ Դոնալդ Թրամփը կառուցել իր նախընտրական արշավը) հանգեցնելու է արտադրության և վերաբաշխման սոցիալիստական վերակազմակերպման որոշ ձևերի: Այս իմաստով՝ վերնախավերի կառուցվածքը, Լահմանի տեսանկյունից, առանցքային դեր է ունենալու: Զինվոր-քուրմ-վաճառական շղթան, որն, ի վերջո, ավարտվում է նրանց վերաճումով բյուրոկրատների, հանգեցնում է պայթուցիկ դիխտոմիայի՝ բյուրոկրատիան ընդդեմ

հարազատության:

Ի հեճուկս հակասությունների, կողմնակի բացասական հետևանքների և մռայլ կանխատեսումների՝ միջազգային միգրացիաներն այս կամ այն կերպ և վերջին հաշվով **համաշխարհային աղքատության** դեմ պայքարի ամենագործուն մեխանիզմներից և գործիքներից են: Ժամանակակից սոցիալական վերլուծության ամենաուշագրավ ու հակասական փաստն այն է, որ աղքատությունը մարդկության համաշխարհային պատմության ամենաարդիական, սուր, կենսազդու և, միաժամանակ, տհաճ թեմա է: Լավատեսական և միանշանակ պատասխան ենթադրող հետազոտական վերջին հարցը, թե գաղթելու որոշում ընդունած **միգրանտները հաղթու՞մ, թե՞**


պարտվում են, ունի միայն մեկ պատասխան. նրանք **միշտ հաղթում են**:

Երկարատև քննարկումների և նրբերանգային հարցազրույցների համար երախտագիտություն են հայտնում ամերիկացի սոցիոլոգներ Այվան Լայթին (Կալիֆոռնիայի համալսարան, Լոս Անջելես), Քևան Չարիսին (Կալիֆոռնիայի համալսարան, Լոս Անջելես) և երրգի Դեռլուզյանին (Աբու Դաբիի Նյույորքյան համալսարան):



Նոնա ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Երևան



**Հայաստանից ուլքե՞ր և ինչպե՞ս են
մասնակցում գլոբալացմանը**